Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ օդանավակայանի շրջանը աչքի է ընկնում քամիների բավական բարդ ինչպես օրական, այնպես էլ սեզոնային ու տարեկան ընթացքով: Օդանավակայանի ԹՎՈ-ի վրա քամու բազմամյա միջին տարեկան արագությունը կազմում է 1,5 մ/վ: Քամիների միջին ամսական համեմատաբար մեծ արագություններ (1,9–2,8 մ/վ) դիտվում են ՏՏԺ-ում՝ պայմանավորված հատկապես հետևյալ ժամերին լեռնահովտային շրջանառության ակտիվացման հետ: ՏՏԺ-ում առավելագույն արագությունները տատանվում են 20–24 մ/վ, իսկ պոռթկումները՝ 25–34 մ/վ սահմաններում: ՏՏԺ-ում առավելագույն արագությունները հասնում են 20 մ/վ (նոյեմբեր) մինչև 34 մ/վ (հունվար), իսկ պոռթկումները՝ 23 մ/վ (դեկտեմբեր) մինչև 35 մ/վ (հունվար): Օդանավակայանի շրջանում անդորրի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա կրկնելիությունը ՏՏԺ-ում միջինը կազմում է 43%, ՏՏԺ-ում՝ 69%, իսկ տարեկան միջինը՝ 56%: Քամիների ուղղությունների կրկնելիությունները ևս ունի բավականին բարդ բնույթ ինչպես ամսական, այնպես էլ տարեկան կտրվածքում (նկ 1): Այսպես, ՏՏԺ-ում օդանավակայանի շրջանում ակտիվ են հատկապես հարավ-արևմտյան (կապված ցիկլոնային շրջանառության ակտիվացման հետ) և հաճախ հարավային ու հարավարևելյան ուղղություններից փչող ջրհեղեղները, որոնց արագությունը կարող է հասնել 15–20 մ/վ, հաճախ նաև պոռթկումներով՝ մինչև 28–30 մ/վ: Այս քամիները թռիչքների համար լինում են դիմախար և կողային, իսկ վայրէջքների համար համընթաց ու կողային, որոնք առավել շատ խոչըրդոտում են վայրէջքների իրականացումը, չնայած որ քամիներին գումարվում են նաև ճակատային երևույթներով պայմանավորված ցածր ամպամածությունը, հորիզոնական սահմանափակ տեսանելիությունը, մառախուղները և ավիացիայի համար վտանգավոր այլ օդերևութաբանական երևույթներ: Եղանակային մանա պայմաններում թռիչքները դադարեցվում կամ հետաձգվում են, իսկ վայրէջքի համար ուղղարկվում են պահեստային օդանավակայաններ («Զվարթնոց» կամ «Արզնի»): Տարվա ընթացքում գերակշռող կիկնելիություն ունեն հարավային (20%), հարավարևմտյան (18%) և հյուսիսարևելյան (17%) ուղղություններից փչող քամիները: Մնացած ուղղություններից քամիների կրկնելիությունը կազմում է 5–12%:



Նկ. 1. «Էրեբունի» օդանավակայանի հունվար, հուլիս ամիսների և տարեկան բամիների վարդերը (%), 7ոժ գիժը ցույց է տալի ԹՎՈւ-ի ուղղությունը (28°; 208°):

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում բազմամյա տարեկան միջին օդի ջերմաստիճանը կազմում է մոտ 12,0°C: Միջին առավելագույն և միջին նվազագույն ջերմաստիճանները՝ կազմում են համապատասխանաբար 18,1°C և 6,1°C, բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները՝ համապատասխանաբար 42°C և -29°C:

Մթնոլորտային ճնշումը և դրա ճիշտ հաշվարկումը ԹՎՈւ-ի վրա հատկապես կարևոր է թռիչքների և վայրէջքների անվտանգ իրականացման համար: Մթնոլորտային ճնշման տարեկան միջին արժեքը օդանավակայանի ԹՎՈւ-ի վրա կազմում է 684,5 մմ կամ 912,4 հՊա, բացարձակ առավելագույն արժեքը գրանցվել է 708,8 մմ կամ 944,8 հՊա, իսկ բացարձակ նվազագույն արժեքը՝ 663,2 մմ կամ 884,5 հՊա: Մթնոլորտային ճնշման տարեկան միջին տատանումները կազմում են մոտ 10 մմ կամ մոտ 11 հՊա:

Չորրորդ գլխում, «Էրեբունի» օդանավակայանի շրջանի ցածր ամպամածության և հորիզոնական սահմանափակ տեսանելիության զննահատուկ թռիչքների անվտանգության ապահովման համար, բազմաբովանդակ և մանրակրիտ ուսումնասիրություններ են կատարվել օդանավակայանի շրջանում ընդհանուր և ստորին հարկի ամպամածության, մինչև 1000 մ բարձրության ամպերի, հորիզոնական սահմանափակ տեսանելիության, այդ թվում՝ մշուշի և մառախուղի վերաբերյալ:

Նկ. 2-ում տրված է «Էրեբունի» օդանավակայանի շրջանում տարբեր բարձրությունների վրա (մինչև 1000 մ) դիտվող ամպամածության կրկնելիության բազմամյա տարեկան ընթացքն ըստ ամիսների: Նկ. 2-ից երևում է, որ այստեղ ամպամածության մինչև 1000 մ ստորին սահմանի բարձրությունների կրկնելիությունը ունի հետևյալ ընթացքը: Այսպես.

1. Ամպամածության մինչև 100, 200 և 300 մ բարձրությունների կրկնելիությունը և դրանց դիտման ժամանակահատվածները հիմնականում համընկնում են, որոնք դիտվում են գլխավորապես նոյեմբեր-փետրվար ամիսներին, որոնց միջին արժեքները նշված ժամանակահատվածի համար կազմում են համապատասխանաբար՝ 12%, 22% և 28%, որոնք իրենց առավելագույնին են հասնում դեկտեմբեր և հունվար ամիսներին՝ կազմելով համապատասխանաբար 28% և 37%: Այս բարձրությունների ամպամածություն առանձին դեպքերով դիտվում են նաև հոկտեմբեր և մարտ ամիսներին, որոնց կրկնելիությունը համեմտաբար փոքր է և կազմում է համապատասխանաբար 3%, 5% և 8%: Ապրիլից սեպտեմբեր ամիսներին նշված բարձրությունների ամպամածություն օդանավակայանի շրջանում չի դիտվում:
2. Ամպամածության նվազագույնը մինչև 500 մ բարձրությունները սկսում են դիտվել առանձին դեպքերով հոկտեմբերի առաջին տասնօրյակից և շարունակվում են մինչև մայիսի վերջը: Նշված ժամանակահատվածի համար կրկնելիությունը կազմում է մոտ 22%, դեկտեմբեր-հունվար ամիսներին հասնում է իր առավելագույնին (43%), իսկ հոկտեմբեր, մարտ-մայիս ամիսներին չի գերազանցում 4%-ը: Դուրս-սեպտեմբեր ամիսներին մինչև 500 մ բարձրությունների ամպամածություն օդանավակայանի շրջանում դիտվում է խիստ հազվադեպ և բավականին կարճատև:
3. Ամպամածության մինչև 1000 մ բարձրություններ դիտվում են ողջ տարվա ընթացքում, որոնց բազմամյա միջին տարեկան կրկնելիությունը կազմում է 25%: Վերջիններիս բաշխվածությունը

3. Կիսանձայրիկ հավասարումները կարող ենք օգտագործել ամպերի ինչպես հաշվարկային բարձրությունների, այնպես էլ ընթացքային, գերկարճաժամկետ և կարճաժամկետ կանխատեսումների կազմման ժամանակ: Այս բանաձևերի օգնությամբ կարող ենք հաշվարկել ամպերի ստորին սահմանների բարձրությունները նաև այն դեպքերում, երբ թռիչքներն իրականացվում են օդանավակայանի շրջանից ավելի մեծ հեռավորությունների վրա (հատկապես գիշերային ժամերին), ինչպես նաև ըստ թռիչքուղիների և այն դեպքերում, երբ թռիչքներ են իրականացվելու անօդաչու թռչող տեխնիկայով, որտեղ չունենք ամպամածության բարձրությունների վերաբերյալ տվյալներ: Ընդ որում ամպերի ստորին սահմանների բարձրությունների հաշվարկային և կանխատեսվող արժեքը կարող ենք ներկայացնել որոշակի ինտերվալով համաձայն ավիացիոն կանխատեսումների պահանջների:
4. Վ. Մ. Յարկովի՝ ամպերի ստորին սահմանների մինչև 3000 բարձրությունների կանխատեսման մեթոդիկայով «Էրեբունի» օդանավակայանի շրջանի համար մշակված տեղական կանխատեսման մեթոդիկան նպատակահարմար է օգտագործել նոյեմբերի վերջին տասնօրյակից մինչև փետրվարի առաջին տասնօրյակի վերջը: Այս ժամանակաշրջանում ապահովվում է կանխատեսումների առավելագույն արդարացվածությունը: Այսպես, այն գերկարճաժամկետ կանխատեսումների համար ապահովում է մինչև 80–85%, իսկ ընթացքային կանխատեսումների համար՝ մոտ 90% արդարացվածություն:
5. Թռիչքների և հատկապես վայրէջքների անվտանգ իրականացման համար, երբ հաճախ հարկ է լինում տալ առաջիկա 10–20 րոպեների ընթացքում ամպերի ստորին սահմանների բարձրությունների և հորիզոնական տեսանելիության վերաբերյալ զննահատականներ, ապա այս դեպքում ընթացքային և կարճաժամկետ կանխատեսումների մեթոդներից օգտվելուց բացի կարող ենք օգտագործել նաև ամպամածության բարձրությունների և հորիզոնական տեսանելիության արժեքների վերաբերյալ վերջին մեկ ժամվա համար՝ ավտոմատ համակարգի կողմից կառուցված փոփոխությունների կորերը (զննահատել դրանց դինամիկան և միտումները) և տալ այսպես կոչված ինտերցիոն կանխատեսումներ՝ հաշվի առնելով դիտվող սինօպտիկական իրավիճակը:
6. Աշխատանքի վերլուծությունների և ուսումնասիրությունների վերջնական արդյունքները, այդ թվում ցածր ամպամածության կանխատեսումների համար մշակված տեղական մեթոդիկաները, ներդրվել են և հաջողությամբ օգտագործվում են «Էրեբունի» օդանավակայանի ռազմական օդերևութաբանական ծառայությունում: Աշխատանքի արդյունքները օգտագործվում են նաև օդանավակայանի շահագործման ծառայության, թռիչքների ղեկավարման խմբի, հրամանատարական և օդաչուական անձնակազմի կողմից: Ինչպես նաև առաջարկվում է դրանք ներդնել և օգտագործել «Զվարթնոց» օդանավակայանի ավիացիոն օդերևութաբանական կազմակերպությունում և Հայպետհիդրոմետում:


2. Օդերևութաբանական պայմանների շրջանացումը ըստ թռիչքների բարդության աստիճանի, ցույց է տալիս, որ այստեղ ընդհանուր առմամբ գերակշռող են պարզ օդերևութաբանական պայմաններով եղանակները, որոնք հիմնականում դիտվում են տարվա տաք ժամանակահատվածում: Բարդ օդերևութաբանական պայմաններ դիտվում են ողջ տարվա ընթացքում: Ընդ որում տարվա ցուրտ ժամանակահատվածում՝ ամբողջ օրվա ընթացքում, իսկ տարվա տաք ժամանակահատվածում՝ կարճատև ընթացքով օրվա երկրորդ կեսից հետո: Ոչ թռիչքային եղանակներ հիմնականում դիտվում են տարվա ցուրտ ժամանակահատվածում, իսկ տարվա տաք ժամանակահատվածում՝ կեսօրից հետո: Եղանակի նվազագույն պայմաններով թռիչքային օրեր դիտվում են տարվա ցուրտ ժամանակահատվածում (զլխավորապես նոյեմբեր–փետրվար ամիսներին):
3. Օդանավակայանի շրջանում տարվա ընթացքում ինչպես ցածր ամպամածությունը, այնպես էլ հորիզոնական սահմանափակ տեսանելիությունը (այդ թվում մառախուղները) ունեն բավականին բարդ բնույթ և արտահայտված տարեկան, սեզոնային ու օրական ընթացք: Դրանք դիտվում են զլխավորապես նոյեմբեր-փետրվար ամիսներին՝ թռիչքների համար ստեղծելով բարդ օդերևութաբանական պայմաններ, հաճախ նաև ոչ թռիչքային եղանակներ:
4. Կիսանձախիլ մի քանի հավասարումներով կատարված ցածր ամպամածության բարձրությունների կանխատեսումները ցույց տվեցին, որ «Էրեբունի» օդանավակայանում դրանք հավանականությունները տատանվում են նոյեմբեր ամսին 45–50 %-ի, դեկտեմբերին՝ 55–63%-ի, հունվարին՝ 68–78 %-ի, փետրվարին՝ 60–65%-ի իսկ մարտին՝ 50–55%-ի սահմաններում:
5. Սինօպտիկական-վիճակագրական մեթոդով ցածր ամպամածության ընթացքային և գերկարճաժամկետ կանխատեսումները ապահովում են միջին հաշվով մոտ 80 %, իսկ կարճաժամկետ կանխատեսումները՝ մոտ 70–75% արդարացվածություն:
6. Ցածր ամպամածության կանխատեսումները Ե. Ի. Գոգոլի մեթոդով՝ օդանավակայանում ապահովում են մոտ 85–90% արդարացվածություն:
7. Վ. Ս. Յարկովի մեթոդով մինչև 300մ ամպերի ստորին սահմանների բարձրությունների կանխատեսումները «Էրեբունի» օդանավակայանի շրջանի համար ապահովում են միջինը 85% արդարացվածություն:

Առաջարկություններ.

1. Եղանակի ավիացիոն կանխատեսումների կազմման ժամանակ, հաճախ կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ ցածր ամպամածության և հորիզոնական սահմանափակ տեսանելիության պայմանները ունենում են բավականին բարդ բնույթ: Այսինքն կարճ ժամանամիջոցում կարող են դիտվել ամպերի ստորին սահմանների և հորիզոնական սահմանափակ տեսանելիության արժեքների անընդհատ ու զգալի փոփոխություններ: Այս դեպքում խորհուրդ է տրվում ևս մեկ անգամ մանրակրկիտ ուսումնասիրել ընդհանուր սինօպտիկական դաշտը և կանխատեսումները կազմել համաձայն գերակշռող պրոցեսների:
2. Հորիզոնական սահմանափակ տեսանելիության կանխատեսումների կամ հաշվարկային արժեքների որոշման համար կարելի է օգտվել ամպերի ստորին սահմանների բարձրությունների և հորիզոնական սահմանափակ տեսանելիության միջև հաստատված կոռելյացիոն կապից:


Ներտարեկան ընթացքում խիստ անհավասարաչափ է: Այսպես, դրանք հիմնականում դիտվում են հոկտեմբեր–մայիս ամիսներին, որոնց միջին կրկնելիությունը կազմում է 35%: Դրանք իրենց առավելագույնին են հասնում նոյեմբեր–փետրվար ամիսներին՝ կազմելով մոտ 49%, իսկ միայն դեկտեմբեր և հունվար ամիսներին՝ 58%: Հունիս–օգոստոս ամիսներին ամպամածության մինչև 1000 մ բարձրությունների կրկնելիությունը չի գերազանցում 8%-ը:

Այսպիսով, ամպերի ստորին սահմանների բարձրությունների մասն ընթացքը և դրանց կրկնելիությունը պայմանավորված է ինչպես մթնոլորտի ընդհանուր և տեղական շրջանառության, այնպես էլ ցիկլոնային դաշտերի՝ ըստ սեզոնների ակտիվության և թուլացման, մթնոլորտային ճակատների ներխուժումների հետ, ինչպես նաև տարածքի տեղական պայմաններին բնորոշ առանձնահատկություններով ու անթրոպոգեն գործոններով:




Նկ.2. «Էրեբունի» օդանավակայանի շրջանում տարբեր բարձրությունների վրա դիտվող ամպամածության կրկնելիության տարեկան ընթացքը:

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում ստորին հարկի ամպամածության միջին բարձրությունների բազմամյա դինամիկան վերլուծվել է 1970 – 2010 թթ. տվյալներով (Նկ. 3):



Նկ. 3. «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ստորին հարկի ամպամածության բազմամյա տարեկան միջին բարձրությունների դինամիկան:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օդանավակայանի շրջանում սահմանափակ հորիզոնական տեսանելիության տարբեր արժեքները տարվա ընթացքում ունեն բավականին բարդ բնույթ (Նկ. 4):




Նկ. 4. «Էրեբունի» օդանավակայանի շրջանում հորիզոնական տեսանելիության տարբեր արժեքների բազմամյա ամսական ընթացքի կրկնելիությունը, (%):

Այսպես, 500–ից մինչև 1000մ հորիզոնական տեսանելիություններ դիտվում են հոկտեմբերի վերջից մինչև մարտի առաջին տասնօրյակի սկիզբը: Այդ ժամանակահատվածում դրանց միջին կրկնելիությունը կազմում է մոտ 5%, ամենամեծ կրկնելիությունը դիտվում է դեկտեմբեր–հունվար ամիսներին՝ միջինը 9%: Սկսած մարտի առաջին տասնօրյակի վերջերից մինչև հոկտեմբերի վերջը 500–ից մինչև 1000մ հորիզոնական տեսանելիություններ օդանավակայանի շրջանում չի գրանցվում: Տարեկան գրեթե նույն ընթացքն ունեն 1000–2000մ և 2000–3000մ հորիզոնական տեսանելիությունները: Դրանք դիտվում են սեպտեմբերի վերջին տասնօրյակից մինչև ապրիլի առաջին տասնօրյակը: Այս ժամանակահատվածում դրանց միջին կրկնելիությունները կազմում են համապատասխանաբար 6 և 11%, առավելագույնը դիտվում է նոյեմբեր–փետրվարին և կազմում է՝ միջինը 10 և 18%: 3000–5000 մ հորիզոնական տեսանելիությամբ եղանակային պայմաններ դիտվում են գրեթե ողջ տարվա ընթացքում (28%), առավելագույն արժեքները գրանցվում են նոյեմբեր–մարտ ամիսներին (52%), իսկ նվազագույնը՝ զլխավորապես հունիս–սեպտեմբեր ամիսներին (մոտ 3%), որոնք տարվա այս ժամանակահատվածում ունեն խիստ կարճատև բնույթ՝ պայմանավորված ինչպես մթնոլորտային ճակատներով այնպես էլ ներգանգվածային երևույթներով:


«Էրեբունի» օդանավակայանի շրջանում մշուշի (1–5կմ) բազմամյա դինամիկան վերլուծվել է 1970–2010թթ. տվյալներով (Նկ.5): Ուսումնասիրված ժամանակահատվածում մշուշի նվազագույն տեսանելիություն (2400 մ), գրանցվել է 1985թ-ին, առավելագույնը՝ 4300 մ (1994թ. և 2001թ.): Բազմամյա միջին արժեքը կազմում է 3500 մ, որն ունի աճման միտում:



Նկ. 5. «Էրեբունի» օդանավակայանում 1–5կմ հորիզոնական տեսանելիության (մշուշ) բազմամյա տարեկան դինամիկան (1970–2010 թթ):



ա



բ

Նկ. 10. «Էրեբունի» օդանավակայանի շրջանում օդի ջերմաստիճանի և ցողի կետի պակասորդի (ա), գետնամերձ քամու և ցողի կետի պակասորդի (բ) միջոցով մինչև 300 մ ամպերի ստորին սահմանների բարձրությունների (UUSP) կանխատեսումը:

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ե Կ Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Ուսումնասիրելով և գնահատելով «Էրեբունի» օդանավակայանի ավիացիոն օդերևութաբանական պայմանները և տեղայնացնելով ցածր ամպամածության կանխատեսումների գոյություն ունեցող մեթոդները, հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. «Էրեբունի» օդանավակայանում քամիների, ինչպես արագությունները, այնպես էլ ուղղությունները, ունեն բավականին բարդ ընթացք, որն էլ մեծ խոչընդոտ է հանդիսանում թռիչքների իրականացման և անվտանգության ապահովման համար: Քամիների մեծ արագություններ դիտվում են հատկապես տարվա տաք ժամանակահատվածում հետևյալ ժամերին՝ կապված լեռնահովտային քամիների հետ:

Աղյուսակ 3

Կորի համարը	ԱՍՍԲ-ն, մ	Կապի հավասարումը	Կոռելյացիայի գործակիցը
1	500 – 300	$y = 0,771x - 4,21$	$R = 0,99$
2	300 – 200	$y = 0,8138x - 2,55$	$R = 0,98$
3	200 – 100	$y = 0,9058x - 1,3464$	$R = 0,99$
4	100 մ և ավելի ցածր	$y = 0,962x - 0,6329$	$R = 0,99$

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում 500մ և ավելի ցածր ամպամածության պայմաններում՝ օդի (x) և ցողի կետի (y) ջերմաստիճանների միջև կոռելյացիոն կապերի հավասարումները և գործակիցները:


4. Մ. Յարկովի մեթոդիկայով՝ մինչև 300 մ բարձրությունների վրա գտնվող ամպամածության կարճաժամկետ կանխատեսումների մեթոդը (որը լայն օգտագործելիություն ունի Արևմտյան Սիբիրում և Ուրալում) հիմնված է օդի ջերմաստիճանի, ցողի կետի պակասորդի և գետնամերձ քամու արագությունների վրա: Այս երկու դեպքերի համար գրաֆիկական տարբերակով առաջարկում է զննահատել ցածր ամպամածության առաջացման հավանականությունը (կանխատեսումը) առաջիկա 9 ժամվա համար:

Օգտագործելով «Էրեբունի» օդանավակայանի ԱՕԿ-ի 2000–2010թթ-ի դիտարկումների տվյալները՝ Վ. Մ. Յարկովի մեթոդիկայով կառուցվել են երկու գրաֆիկներ, որոնց միջոցով առաջիկա 9 ժամվա համար կարելի է տալ կանխատեսումներ մինչև 300մ ԱՍՍԲ-ի համար, եթե ունենք օդի և ցողի կետի ջերմաստիճանները, ինչպես նաև գետնամերձ քամու արագությունները: Այսպես, նկ. 10-ում օգտագործվել է օդի ջերմաստիճանի ու ցողի կետի պակասորդի արժեքները (ա), և ցողի կետի պակասորդի ու գետնամերձ քամու արագությունների արժեքները (բ)՝ այն դեպքերի համար, երբ ամպերի բարձրությունները գտնվել են 300մ և ավելի ցածր բարձրությունների վրա:

Եթե օդի ջերմաստիճանի, ցողի կետի պակասորդի և գետնամերձ քամու արագությունների կանխատեսված արժեքները գտնվում են նկ. 10-ի «1» տիրույթում, ապա պետք է սպասել, որ կանխատեսման ժամանակահատվածում «Էրեբունի» օդանավակայանի շրջանում կդիտվի մինչև 300մ ավելի ցածր ստորին սահմաններով ամպամածություն: Իսկ եթե օդի ջերմաստիճանի, ցողի կետի պակասորդի և գետնամերձ քամու արագությունների կանխատեսվող արժեքները գտնվում են «2» տիրույթում, ապա կանխատեսման ժամանակահատվածում ԱՍՍԲ-ն կլինի 300մ և ավելի: Այս դեպքում անհրաժեշտ է հետևել զարգացող սինօպտիկական իրավիճակին:

Կանխատեսման այս մեթոդիկան նպատակահարմար է օգտագործել նույնքերի վերջին տասնօրյակից մինչև փետրվարի առաջին տասնօրյակի վերջը, քանի որ միայն այս ժամանակաշրջանում է, որ ապահովվում է ԳԿ-ի համար մինչև 80–85% և ԸԿ-ի համար՝ մոտ 90% արդարացվածություն:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ամպամածության շերտի բարձրացման հետ մեկտեղ մեծանում է հորիզոնական տեսանելիությունը և հակառակը այսինքն դրանք գտնվում են ուղիղ համեմատական կապի մեջ (նկ. 6): Կոռելյացիոն այս կապի գործակիցը հավասար է՝ $R=0,92$, իսկ հավասարումը ունի հետևյալ տեսքը՝ $y=0,31x+172$; որտեղ y -ը՝ ամպերի ստորին սահմանի բարձրությունն է, x -ը՝ հորիզոնական տեսանելիությունը: Այս հավասարումը կարելի է օգտագործել օդանավակայանի շրջանում ամպերի ստորին սահմանների բարձրությունների կամ հորիզոնական տեսանելիության հաշվարկային արժեքների որոշման համար:



Նկ. 6. «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ամպերի ստորին սահմանի բարձրությունների և հորիզոնական տեսանելիության միջև կոռելյացիոն կապը:

Այս գլխում 2006–2012 թթ. դիտարկումների տվյալների հիման վրա կատարվել է նաև օդանավակայանի շրջանում օդերևութաբանական պայմանների շրջանացում՝ ըստ թռիչքների բարրության աստիճանի որոշման մեթոդիկայի: Շրջանացման արդյունքները հստակ պատկերացում և զննահատական են տալիս օրվա ընթացքում թռիչքների իրականացման ավիացիոն օդերևութաբանական պայմանների և անվտանգության ապահովման հնարավորությունների վերաբերյալ:

Ըստ Գ. Գ. Սուրենյանի կողմից տրված ԳԳ տարածքի եղանակակիցայական պայմանները ձևավորող բարիկական դաշտերի դասակարգման սկզբունքի հիման վրա՝ 2000–2010թթ-ի տվյալներով և նյութերով վերլուծվել են գետնամերձ շերտի անալիզի, ԲՏ-850, ԲՏ-700, ԲՏ-500, ԲՏ-300 և ԳՏ500/1000 ստանդարտ իզոթար մակերևութների սինօպտիկական քարտեզները, որի արդյունքում տրվել են օդանավակայանի շրջանում ոչ թռիչքային եղանակների (ՈՌԵ), բարդ օդերևութաբանական պայմանների (ԲՕՊ), եղանակի նվազագույնի (ԵՆ) և պարզ օդերևութաբանական պայմանների (ՊՕՊ) առաջացման հավանականությունը և դրանց պահպանումը պայմանավորող սինօպտիկական երևույթների վերլուծությունը:

Կիսրոսյան զիկլոն: Բարիկական այս համակարգի ներխուժումների դեպքում, կախված օդի ջերմաստիճանից, մթնոլորտային ճնշման դաշտից, քամիների բնույթից և մթնոլորտային տեղումներից «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ՈՌԵ-ի առաջացման հավանականությունը կազմում է մոտ 35%, ԲՕՊ-ի առաջացման հավանականությունը՝ 55%, որը կարող է պահպանվել մի քանի ժամից մինչև առավելագույնը 2օր, այն էլ ոչ ամբողջ օրվա ընթացքում, իսկ ԵՆ պայմաններ դիտվում են գլխավորապես առավոտյան, երեկոյան և գիշերային ժամերին, որոնց առաջացման հավանականությունը այդ ժամերին կազմում է 40%:

Չարավային զիկլոն: Գարավային ցիկլոնի ներթափանցման դեպքում «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ՈՌԵ-ի և ԵՆ-ի առաջացման հավանականությունները չեն գերազանցում 10%-ը, իսկ ԲՕՊ-ի առաջացման հավանականությունը կազմում է մոտ 35%: Նույնքեր-մարտ ամիսներին դիտվում է երևույթի միջինը 1–2 դեպք:

Եզիպատական գիլյուն: Եզիպատական գիլյունի ներթափանցման դեպքում «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԲՕՊ-ի առաջացման հավանականությունը կազմում է 25–30%, իսկ ՈԹԵ-ներ և ԵՆ պայմաններ չեն դիտվում:

Արևմտյան գիլյուն: Արևմտյան գիլյունի ներթափանցման դեպքում «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԲՕՊ-ի հատկապես ամպերի մինչև 300մ բարձրությունների ու մառախուղների առաջացման հավանականությունը կազմում է միջինը 60–65%: ՈԹԵ-ի առաջացման հավանականությունը կազմում է մոտ 40–45%, իսկ ԵՆ-ինը՝ մոտ 50%:

Ալանդյան անտիցիկոն: ՏՏԺ-ում դիտվում է այս երևույթի միջինը 1–2 դեպք, որի ժամանակ «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԲՕՊ-ի և ԵՆ-ի առաջացման հավանականությունը կազմում է 45–50%, իսկ ՈԹԵ-ինը՝ 35%:

Արևմտաեվրոպական անտիցիկոն: Սինոպտիկական այս երևույթի դեպքում, կախված խոնավության հագեցվածության աստիճանից, օդի ջերմաստիճանից ու քամիների բնույթից «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԲՕՊ-ի և ԵՆ-ի առաջացման հավանականությունները տատանվում են 55–60%-ի սահմաններում: ՈԹԵ-ի առաջացման հավանականությունը կազմում է մոտ 40%:

Ազորյան անտիցիկոն: ՏՏԺ-ում ԳՅ տարածք Ազորյան անտիցիկոնի ներթափանցման ժամանակ «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԲՕՊ-ի առաջացման հավանականությունը կազմում է 50%, ԵՆ-ինը՝ 40–45%, իսկ ՈԹԵ-ինը՝ 30–35%:

Միջինական անտիցիկոն: «Էրեբունի» օդանավակայանի շրջանում մառախուղների և ցածր ամպամածության ձևավորման հավանականությունները այս պրոցեսի դեպքում, որը բերում է ԲՕՊ-ի, ԵՆ-ի հաճախ նաև ՈԹԵ-ի առաջացման, կազմում է 75–80%:

Լոկալ անտիցիկոն: «Էրեբունի» օդանավակայանի շրջանում պայմանավորված լոկալ անտիցիկոնով ԲՕՊ-ի առաջացման հավանականությունը բավականին մեծ է՝ մոտ 80–85%, ԵՆ-ի հավանականությունը՝ 70%, իսկ ՈԹԵ-ինը՝ մոտ 60%:

Ստացիոնար անտիցիկոն: «Էրեբունի» օդանավակայանի շրջանում պայմանավորված ստացիոնար անտիցիկոնային դաշտով ԲՕՊ-ի և ԵՆ-ի առաջացման հավանականությունները տատանվում են 70–75%-ի, իսկ ՈԹԵ-ը՝ 55–60%-ի սահմաններում, որը դիտվում է գլխավորապես առավոտյան, երեկոյան և գիշերային ժամերին:


Չինգեղոտո գլխում, Ցածր ամպամածության կանխատեսման մեթոդների վերլուծությունը, դրանց տեղայնացումը և կիրառումը «Էրեբունի» օդանավակայանի շրջանում մանրամասնորեն վերլուծվել են աշխարհում լայն տարածում ու գործածություն ունեցող ցածր ամպամածության և հորիզնական սահմանափակ տեսանելիության մեթոդները, որոնք տեղայնացվել են «Էրեբունի» օդանավակայանի շրջանում և զմահատվել է դրանց տեղայնացման ու գործնականում օգտագործման արդյունավետությունն ու արդարացվածությունը:

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում մինչև 500մ բարձրությունների վրա դիտվող ամպամածության զերկարժամկետ կանխատեսումների համար տեղայնացվել և օգտագործվել են կիսաեմպիրիկ հավասարումներ (աղյ. 1): Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, «Էրեբունի» օդանավակայանի համար ստացված հավասարում (1)-ով ամպերի ստորին սահմանների բարձրությունների (ԱՍՄԲ) հաշվարկման դեպքում, ինչքան ցածր է ԱՍՄԲ-ն, այնքան մեծ է ճշտությունը և հակառակը: Այսպես, ամպերի մինչև 350մ բարձրությունների համար սխալի տոկոսը տատանվում է 0–14%-ի սահմաններում, իսկ դրանից բարձր՝ մինչև 500մ բարձրությունների դեպքում՝ սխալի տոկոսը աստիճանաբար մեծանում է հասնելով մինչև 38%-ի: Այսինքն, հավասարում (1)-ով կարող ենք բավականին մեծ ճշտությամբ հաշվարկել «Էրեբունի» օդանավակայանի շրջանում մինչև 350մ ԱՍՄԲ-ն: Մի փոքր այլ պատկեր է ստացվում հավասարում (2)-ի միջոցով հաշվարկները: Այսպես, այս բանաձևով ամպերի ստորին սահմանների բարձրությունների հաշվարկները առավել ճշգրիտ են ստացվում 200–ից մինչև 450մ ամպերի բարձրությունների համար, որտեղ սխալի տոկոսը տատանվում է 18-26%-ի սահմաններում:

Ե. Ի. Գոզոլկի մեթոդիկայով ամպերի ստորին սահմանների բարձրությունների կանխատեսումը հիմնված է օդի և ցողի կետի ջերմաստիճանների միջև կոռելյացիոն կապերի հաստատման վրա:

«Էրեբունի» օդանավակայանի 2000–2010թթ-ի դիտարկումների տվյալներում առանձնացվել են ցածր ամպամածության, ինչպես նաև մինչև 500մ ԱՍՄԲ-ի ժամանակ դիտված օդի և ցողի կետի ջերմաստիճանների արժեքները, որոնց միջև հաստատվել են կոռելյացիոն կապեր: Նկ. 9-ում տրված են 100մ և ավելի ցածր, 200–100մ, 300–200մ և 500–300մ ԱՍՄԲ-ի դեպքում՝ օդի և ցողի կետի ջերմաստիճանների միջև կոռելյացիոն կապերի գրաֆիկները: Վերջիններիս կապերի հավասարումները և կոռելյացիայի գործակիցները տրված են աղյ. 3-ում:

Ցածր ամպամածության կանխատեսումների այս մեթոդից օգտվելու կարգը հետևյալն է՝ ունենալով որոշակի ժամանակահատվածի համար տրված օդի և ցողի կետի ջերմաստիճանի կանխատեսված արժեքները, դրանք տեղադրում ենք գրաֆիկի վրա և որոշում ամպամածության հավանական բարձրությունը, որը կդիտվի նույն այն ժամանակահատվածում, որի համար տրված են օդի և ցողի կետի ջերմաստիճանի կանխատեսումները: Այս մեթոդը կարող ենք օգտագործել օրվա ցանկացած ժամանակահատվածի՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ զերկարժամկետ և ընթացքային կանխատեսումների համար:



Նկ. 9. «Էրեբունի» օդանավակայանի շրջանում 500 մ և ավելի ցածր ամպամածության կանխատեսումները՝ օդի և ցողի կետի ջերմաստիճանների միջև կոռելյացիոն կապերի հաստատման միջոցով:

Այսպիսով, «Էրեբունի» օդանավակայանի շրջանի ԱՍՄԲ-ի կանխատեսման համար մշակված այս մեթոդիկան, կարող է ապահովել ճիշտ այնքան արդարացվածություն, որքանով արդարացված կլինեն կանխատեսումները օդի և ցողի կետի ջերմաստիճանների համար: Վերջիններիս վերաբերյալ տրված կանխատեսումների և դիտված փաստացի արժեքների վիճակագրական տվյալների վերլուծությունները ցույց են տալիս, որ դրանք կարող են արդարանալ՝ 94-ի և ԸԿ-ի համար՝ մոտ 85–90%, իսկ ԿԿ-ի համար՝ մոտ 80%: Այսինքն, համապատասխան արդարացվածություն էլ կարող է ապահովվել ԱՍՄԲ-ի կանխատեսումների համար:

Ամպերի ստորին սահմանի փաստացի բարձրությունները, մ	Օդի ջեմաստիճան, T _d °C	Ցողի կետի ջերմաստիճան, T _d °C	Օդի հարաբերական խոնավություն, r %	Ամպերի ստորին սահմանների հաշվարկային բարձրությունները, մ		Փաստացի և հաշվարկային բարձրությունների			
				հավասարում (1) H=30(100-r)	հավասարում (2) H=206(T-T _d)	տարբերությունը, մ.	վնասի %	տարբերությունը, մ.	վնասի %
						հավ. (1)	հավ. (2)		
60	-5,4	-5,5	98	60	20	0	0	40	66
100	-1,9	-2,2	97	90	60	10	10	40	40
150	1,2	0,8	95	150	80	0	0	70	45
200	-7,6	-8,8	93	210	250	10	5	50	23
250	-10,1	-11,0	92	240	190	10	4	60	26
300	0,4	-1,4	91	270	370	30	10	70	23
350	2,5	1,1	90	300	290	50	14	60	18
400	3,2	1,6	91	270	330	130	32	70	18
450	0,9	-1,7	80	600	530	150	33	80	18
500	-2,6	-5,7	77	690	640	190	38	140	27

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում ամպերի ստորին սահմանների բարձրությունների հաշվարկը՝ ըստ տեղայնացված կիսաէմպիրիկ հավասարումների:

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում ԱՍՍԲ-ի կանխատեսումների համար՝ օգտագործվել են նաև էքստրապոլյացիոն մեթոդով աշխատող մի շարք այլ հավասարումներ, որոնք միջին հաշվով գերկարճաժամկետ կանխատեսումների (Գ4) համար ապահովվում են համապատասխանաբար 52–56%, 60–65% և 76–80% արդարացվածություն: Իսկ ընթացքային կանխատեսումների (Ը4) համար դրանց արդարացվածությունը համեմատաբար բարձր է և կազմում են համապատասխանաբար 60–63%, 70–74% և 81–85%:

Այս զվխում ամպերի ստորին սահմանների բարձրությունների (մինչև 500մ) կանխատեսումների հաջորդ մեթոդը հիմնված է Ի. Ն. Ռուսինի և Գ. Գ. Տարականովի կողմից առաջակվող սինոպտիկական պայմանների և եղանակի փաստացի տվյալների վիճակագրական վերլուծության վրա: Այսպես, ուսումնասիրվել են 2000–2010 թթ-ի օդի և ցողի կետի ջերմաստիճանները, ցողի կետի պակասորդը, օդի հարաբերական խոնավությունը, քամիները և սինոպտիկական ընդհանուր դաշտը (մասնավորապես Երկրի գետնամերձ շերտի անալիզի, ՔՏ-850մբ, ՔՏ-700մբ, ՔՏ-500մբ և ՂՏ-500/1000մբ շերտերի սինոպտիկական քարտեզները) ՏՑԺ-ի այն դեպքերի համար, երբ դիտվել են 500մ և ավելի ցածր բարձրությամբ ամպանածություն:

Վերլուծությունների վերջնական արդյունքում կազմվել են «Էրեբունի» օդանավակայանի շրջանում 500մ և ավելի ցածր բարձրությունների վրա գտնվող ամպամածության կանխատեսումների մշակման նոր և առավել արդյունավետ (օպերատիվության առումով) երկու մեթոդիկաներ (ավգրիթմներ), որոնք ներկայացված են նկ. 7 և նկ. 8-ում:

Նշենք, որ ինչպես ցույց տվեցին «Էրեբունի» օդանավակայանի շրջանում ցածր ամպամածության սինօպտիկական - վիճակագրական ուսումնասիրությունների արդյունքները ամպամածության 300-500մ բարձրությունների դեպքում օդի հարաբերական խոնավությունը լինում է մեծ կամ հավասար 88%-ի, իսկ ամպամածության 100-200մ բարձրությունների, ինչպես նաև մառախուղների դեպքում՝ այն կազմում է 92% և ավելի:

Այս զլխում սինօպտիկական-վիճակագրական մեթոդով կազմվել է նաև դիտվող ԱՍՄ-ի պահպանման կամ դրա առաջացման հավանականությունը (արյ. 2): Ինչպես երևում է արյ. 2-ից, ԱՍՄ-ի 100-150մ, 151-200մ և 201-250մ արժեքների պահպանման և առաջացման հավանականությունները դիտարկված եղանակային պայմանների դեպքում նույնն է, իսկ 251-300մ և 301-500մ-ի տարբերությունները փոքր են: Այսպես, օդի միջև 88% հարաբերական խոնավության, 4°C և ավելի ցող կետի պակասորդի և 3մ/վ ու ավելի արագությամբ քամիների դեպքում՝ 100-250մ, 251-300մ և 301-500մ ԱՍՄ-ի պահպանման (առաջացման) հավանականությունները կազմում են համապատասխանաբար 35% (10%), 45% (25%) և 55% (35%): Օդի 88% և ավելի խոնավության, ցողի կետի պակասորդի միջև 2°C և միջև 2 մ/վ արագությամբ քամիների դեպքում՝ 100-250մ, 251-300մ և 301-500մ ԱՍՄ-ի պահպանման (առաջացման) հավանականությունը կազմում է համապատասխանաբար 45% (35%), 50% (45%) և 55% (55%): Օդի 90% և ավելի խոնավության, ցողի կետի պակասորդի միջև 1°C և միջև 1մ/վ արագությամբ քամիների դեպքում՝ 100-250մ, 251-300մ և 301-500մ ԱՍՄ-ի պահպանման (առաջացման) հավանականությունը կազմում է համապատասխանաբար 60% (55%), 75% (70%) և 80% (75%): Օդի 90% և ավելի խոնավության, ցողի կետի պակասորդի միջև 1°C և անդորրի դեպքում՝ 100-250մ և 251-500մ ԱՍՄ-ի պահպանման (առաջացման) հավանականությունը կազմում է համապատասխանաբար 85%(75%) և 90%(80%):

Աղյուսակ 2

ԱՍՄ-ի փաստացի (եւակետային) արժեքները, մ	Առաջիկա 2-3 ժ ընթացքում ԱՍՄ-ի պահպանման (Պ) կամ առաջացման (Ա) հավանականությունը (%)							
	$r \leq 88\%$, $T-T_d \geq 4^\circ\text{C}$, $U \geq 3$ մ/վ		$r \geq 88\%$, $T-T_d \leq 2^\circ\text{C}$, $U \leq 2$ մ/վ		$r \geq 90\%$, $T-T_d \leq 1^\circ\text{C}$, $U \leq 1$ մ/վ		$r \geq 90\%$, $T-T_d \leq 1^\circ\text{C}$, U - անդորր	
	Պ	Ա	Պ	Ա	Պ	Ա	Պ	Ա
100 – 150	35	10	45	35	60	55	85	75
151 – 200	35	10	45	35	60	55	85	75
201 – 250	35	10	45	35	60	55	85	75
251 – 300	45	25	50	45	75	70	90	80
301 – 500	55	35	55	55	80	75	90	80

«Էրեբունի» օդանավակայանի շրջանում առաջիկա 2-3 ժ ընթացքում ամպերի ստորին սահմանների բարձրությունների պահպանման (Պ) կամ առաջացման (Ա) հավանականությունը (%):